4· ՊԱԽՆՑԻՔ (*Հաւք*)

Գիւղս Միրանկցոց $^1/_2$ *ժամ հարաւ և Խնըրիկանի նաև* $^1/_2$ *ժամ արևմուտք կընկնի* 10 *տուն աղքատ քուրդ բնակիչ ունի։*

5· ԽԻՐԻԿԱՆ·

Խնըրիկան կը նշանակէ կպըադըբիւր, $^1/_2$ *ժամ յարևմուտս է Բլուր և* $^1/_2$ *ժամ ևս արևելեան հարաւ Մէամըտանայ, և յարևելս Պաւընանի։ Գիւղս հաստատուած է քիչ բարձրութիւն ունեցող վայրի մի արևմտեան հարաւ նայող երեսին վերայ, որ* 25 *տուն Մամտանցի քուրդ բնակիչ ունի։ Ունի նաև քանի հատ աղբերակունք և արօտներ։*

Խաչլուայ գետակն գիւղիս արևմուտքն քերելով կանցնի, սակայն ամրան եղանակին կաթիլ մի ջուր չօժանդակեր գիւղիս, իւր ջուրը հիւսիսային բարձր գիւղերու մէջ բաժանուելով՝ կը սպառի։

6՛ ՄԻՐԱՆԿՆԵՐ։

Բլուրի $^5/_4$ *ժամ արևելքն, Խժիկ Դաւոյի հովտին արևմտեան հարաւային երեսին վերայ՝ մերձ Ամատ գետոյն աջ ափին՝* 25 *տնուոր մի քրդական գիւղ է։*

7· ՄԼԱՆ։

Գիւղս 8—10 *տուն քուրդ է, ի հիւսիս յարևմուտս Սողանցիք գիւղին։*